Փետրվար 2013թ.

«ԿԱՆԱՉ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

Կառավարում է նա, ով տիրապետում է տեղեկույթին:

Այս համարում

- Հասարակական բնապահպանական մոնիտորինգ ու վերահսկողություն - էջ 2-3
- Հասարակական կազմակերպությունները էկոլոգիական վերահսկողության համակարգում - էջ 3
- Բաց դռների օրեր Գյումրիում, Ալավերդիում, Գավառում, Հրազդանում – էջ 5-7
- Հանդիպում լրագրողների հետ (Դիլիջան) - էջ 7

Հասարակական էկոլոգիական վերահսկողությունը

Բնապահպանական վերահսկողության ձև է, որը նպաստում է քաղաքացիների բարենպաստ շրջակա միջավայրում ապրելու սահմանադրական իրավունքի կատարմանը: Ժողովրդավարական իրավական պետության հռչակման ու քաղաքացիական հասարակության ձևավորման պայմաններում մեծանում է հասարակական էկոլոգիական վերահսկողության նշանակությունը, ինչը բնական է, քանի որ հենց քաղաքացիներն են առավել շահագրգիռ իրենց պատկանող միջավայրի վիճակի համար, հենց նրանց են հայտնի բացթողումներն ու իրավախախտումները շրջակա միջավայրի ոլորտում: Հասարակական էկոլոգիական վերահսկողությունն իրականացվում է ՀԿ-ների, ՏԻՄ-երի, քաղաքացիների կողմից և ունի նույն խնդիրներն, ինչ՝ բնապահպանական վերահսկողության մյուս ձևերը:

Հասարակական բնապահպանական մոնիտորինգ ու վերահսկողություն

Բնապահպանական մոնիտորինգը շրջակա միջավայրի վիճակին, դրանում տեղի ունեցող ֆիզիկական, քիմիական, կենսաբանական պրոցեսների, մթնոլորտի աղտոտվածության մակարդակի, հողերի, ջրային օբյեկտների և բուսական ու կենդանական աշխարհի վրա դրանց ազդեցության հետևանքներին հետևելն է՝ շահագրգիռ կազմակերպություններին ու հասարակությանը շրջակա միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների, առկա վիճակի վերաբերյալ ընթացիկ և անհապաղ տեղեկություններ, նախազգուշացումների ու կանխատեսումների մասին տեղեկատվություն տալու նպատակով: Բնապահպանական մոնիտորինգը հասարակական էկոլոգիական վերահսկողության հիմնական բաղադրիչն է:

Որպես կանոն բնապահպանական մոնիտորինգն իրականացվում է եռամակարդակ համակարգով՝ լոկալ, ռեգիոնալ, գլոբալ:

- Լոկալ մոնիտորինգի շրջանակներում իրականացվում է բնակավայրերի բնական միջավայրի վիճակի վերահսկողություն: Ուշադրության կենտրոնում այստեղ բնակչության բնակության անմիջական տարածքի սանիտարահիգիենիկ վիճակի գնահատականն է:
- Ռեգիոնալ մոնիտորինգն ապահովում է մարզի, տարածաշրջանի կամ ամբողջ երկրի սահմաններում բնական էկոհամակարգի վիճակի վերահսկողությունը: Տվյալների հավաքումը կատարվում է հատուկ դիտակայաններում: Դրանք փոխանցվում են ռեգիոնալ կենտրոններ՝ էկոլոգիական տեղեկատվության մշակման համար, որտեղ դրանք վերլուծվում են ռեգիոնի բնական միջավայրի վիճակի ընդհանրացված գնահատականների ստացման համար: Ռեգիոնալ մակարդակով դիտարկումներն իրականացվում են նպատակաուղղված կառույցների կողմից, գիտական ինստիտուտների, ՀՀ-ում, օրինակ, Հայպետհիդրոմետի ու դրա ստորաբաժանումների, ԳԱԱ Էկոլոգանոոսֆերային կենտրոնի կողմից:
- Գլոբալ մոնիտորինգը կոչված է իրականացնելու բնական միջավայրի վիճակի վերահսկողություն ամբողջ աշխարհի մասշտաբով: Հաճախ այդ վիճակն անվանում են

ֆոնային: Ֆոնային վիճակների գնահատականը ենթադրում է լոկալ ու ռեգիոնալ ազդեցությունների բացառում, ինչը գործնականում իրագործելը բավականին դժվար է լինում: Սխալներից խուսափելու համար ընտրվում են տեղանքներ, որտեղ մարդու և արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցությունը բնության վրա նվազագույն է: Որպես կանոն նման տեղանքները գտնվում են Բնության հատուկ պահպանվող տարածքներում:

Էկոլոգիական մոնիտորինգի միասնական համակարգի ստեղծումը

Բնապահպանության նախարարության հիմնական խնդիրներից է: Շրջակա բնական միջավայրի վիճակի դիտարկումն ինքնին ՀՀ-ում իրականացվում է հատուկ իրավասու մարմինների կողմից: Իրավական մեխանիզմների կիրարկումը անհնար կլիներ, եթե չստեղծվեր համապատասխան սարքավորումներով ու միջոցներով հագեցած շրջակա միջավայրի վիճակի դիտարկման հատուկ ծառայություն, մեր երկրի դեպքում՝ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ը, որը «Հանրապետության շրջակա միջավայրի մոնիտորինգի իրականացում» պետական ծրագրի համաձայն իրականացնում է շրջակա միջավայրի՝ մակերևութային ջրերի, մթնոլորտային օդի, մթնոլորտային տեղումների աղտոտվածության որոշում և գնահատում:

Հասարակական կազմակերպությունները էկոլոգիական վերահսկողության համակարգում:

Հասարակության մասնակցությունը էկոլոգիական վերահսկողությանը ոչ միայն ցանկալի է, այլև՝ պարտադիր, համահունչ է նաև Սահմանադրությանը և ՀՀ վավերացրած միջազգային համաձայնագրերին ու պայմանագրերին: Օրինակ, Շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ ստույգ տեղեկատվություն ստանալու և էկոլոգիական իրավախախտումների հետևանքով քաղաքացիների առողջությանը կամ ունեցվածքին հասցված վնասի դիմաց փոխհատուցման քաղաքացիների իրավունքը: Չնայած ՀԿ-ներն իրավախախտների վրա ազդելու ավելի քիչ հնարավորություններ ունեն, քան ՏԻՄ-ները, սակայն դրանց դերը ևս չափազանց նշանակալի է: Դրանք կարող են պահանջել ստույգ և լիարժեք էկոլոգիական տեղեկատվություն, մեղավոր պաշտոնատար անձանց պատասխանատվության ենթարկելու հարց դնել, քաղաքացիների առողջությանն ու ունեցվածքին վնաս հասցնելու վերաբերյալ հայց ներկայացնել, հանդես գալ էկոլոգիապես վտանգավոր արտադրական գործունեության սահմանափակման կամ դադարեցման պնդումներով: ՀԿ-ները կարող են հանդես գալ նաև էկոլոգիական փորձաքննության անցկացման նախաձեռնությամբ, սակայն այս առումով ևս կան օրենսդրական սահմանափակումներ:

Իրադարձություններ

«Համագործակցության նոր հնարավորություններ և հեռանկարներ բնապահպանական ոլորտի պետական և ոչ պետական կառուցների և կազմակերպությունների միջև»

Համայնքի զարգացման գրավականը իրազեկ հասարակությունն է

14 փետրվարի: «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում բաց դռների օր կազմակերպվեց Գյումրիում: Միջոցառման հիմնական նպատակն էր մարզի հասարակությանը ևս մեկ անգամ իրազեկել շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող պետական, մարզային, համայնքային, կրթական և հասարակական կառույցների և կազմակերպությունների գործունեության և գործառույթների, ինչպես նաև առկա բնապահպանական հիմնախնդիրների մասին: Նշված կառույցներին հավաքել մեկ սեղանի շուրջ, նրանց շրջանում ձևավորել փոխադարձ վստահության և դրական համագործակցության մթնոլորտ, բոլոր կողմերին համախմբելով՝ փորձել գտնել համագործակցության նոր հնարավորություններ և հեռանկարներ:

«Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Գյումրու դիտակայանի ղեկավար Ռ. Գասպարյանը մատնանշեց մարդկանց առողջության համար հնարավոր վտանգավոր ազդեցություն պարունակող բնապահպանական առավել կարևոր խնդիրները:

«Գեոֆոն» ՀԿ ներկայացուցիչը նշեց Շիրակի մարզի ֆլորայի և ֆաունայի պահպանմանն ուղղված ծրագրի իրականացման մասին, որով նախատեսվում է Ջաջուռում՝ պատմամշակութային կարևոր հուշարձաններ ունեցող վայրում, արգելավայր կամ արգելոց ստեղծել:

Քննարկվեց նաև գերմանական KFW ծրագրի աջակցությամբ «Շիրակ ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ իրականացրած նոր ջրագծերի անցկացման նախագիծը: Քաղաքապետարանի բնակկոմունալ և շրջակա միջավայրի բաժնի պետը նշեց, որ այս տարի համայնքային բյուջեից 22 մլն դրամ է հատկացվելու քաղաքում կանաչապատման աշխատանքների իրականացման համար:

Քանի որ նախկինում տնկված ծառերի զգալի մասի արմատները չորացել են, ներկաները կասկածանքով արտահայտվեցին նաև այս նախաձեռնության մասին՝ համարելով, որ կանաչապատման անվան տակ գումարները փոշիացվում են: «Կանաչ կառավարում» ծրագրի մարզային փորձագետ, Գյումրու Օրհուս կենտրոնի համակարգող Գ.Պետրոսյանն ասաց, որ մինչև Գյումրին չունենա կանաչապատման ռազմավարություն, այս ոլորտը շարունակելու է մնալ փող լվալու տեղերից մեկը:

Քննարկման մասնակիցներն իրենց մտահոգությունը հայտնեցին հատկապես ամռանը քաղաքի փողոցների փոշու, աղտոտվածության բարձր մակարդակի վերաբերյալ:

15 փետրվարի: «Բաց դռների օր» միջոցառման անցկացման նպատակն Ալավերդիում ՏԻՄ-երի և քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության վերաբերյալ հասարակությանն իրազեկելն էր, համագործակցային ակտիվ շփումների միջոցով հասարակությանը շրջակա միջավայրի պահպանության ոլորտում գործող կազմակերպությունների գործառույթների մեջ ներգրավելը: Չնայած Ալավերդիում քիչ են քաղաքացիական կառույցները և գործող ու ակտիվ ՀԿ-ները, այնուամենայնիվ՝ ասելիք կար: Միջոցառման մասնակիցները

հանդես եկան բանավոր հաշվետվություններով, ներկայացրեցին բնապահպանության ոլորտում իրենց գործառույթներն ու կարևորեցին ընդհանուր մասնակցային, համախմբված գործունեությունը:

«Կանաչ կառավարում» ծրագրի մարզային փորձագետ, Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող Ա. Էվոյանը կարևորեց ՏԻՄ-երի և քաղաքացիական հասարակության կառույցների գործունեության բնապահպանական գործառույթների վերաբերյալ հասարակության իրազեկվածությունը: Նշվեց համայնքի ու տարածաշրջանի բնակիչների ակնհայտ պասիվության, քաղաքացիական կառույցների ոչ բավարար ակտիվության մասին:

Մասնակցները հանդես եկան ծրագրային առաջարկներով: «Երիտասարդ Ալավերդի» ՀԿ-ի ներկայացուցիչը ներկայացրեց իրենց կողմից կազմված հարցարերթիկը: Հարցումների արդյունքներն ամփոփելուց հետո Օրհուս կենտրոնում հնարավորություն կունենան հաղորդելու արդյունքների մասին:

Համագործակցային աշխատանքների կազմակերպման, ծրագրերի արդյունավետ իրագործման ու լուծումների համար առաջ քաշվեց մոնիտորինգային խմբի ստեղծման գաղափարը: Որոշվեց կրկին հանդիպել և դիտողությունների, առարկությունների, խմբի անդամների անելիքների ու գործառույթների վերաբերյալ փաթեթը ներկայացնել քննարկման:

22 փետրվարի: «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում փետրվարի 22-ին Գեղարքունիքի մարզպետարանում իրականացվեց հանդիպում՝ բաց դռների օրվա շրջանակներում: Ծրագրի փորձագետ Մ. Մազմանյանը նշեց, որ հանդիպումը կրում է հաշվետու բնույթ, փորձում է առավել արդյունավետ և փոխկապակցված դարձնել բնապահպանությանը միտվածկառույցների՝ պետական հիմնարկների ու ոչ պետական կազմակերպությունների և քաղաքացիների հետ համագործակցությունը:

Համագործակից կազմակերպությունները ներկայացան

հաշվետու ելույթներով, անդրադարձան տարաբնույթ խնդիրների, բացթողումների, միաժամանակ նաև այն ձեռքբերումներին, որոնք նպաստում են շրջակա միջավայրի ու բնական էկոհամակարգերի պահպանությանը: Իրենց կազմակերպությունների գործունեությունը ներկայացրին «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի» Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղի ղեկավար Լ. Թոփլաղալցյանը, Շահերի պաշտպանության և աջակցության հակակոռուպցիոն կենտրոնի կոորդինատոր Ա. Բաղդոյանը,

«Բլեջան» ՀԿ նախագահ Լ. Ասոյանը, Ջինիշյան հիմնա-դամի կողմից Գավառում իրականացված ու ապագա ծրագրերի կոորդինատոր Ա. Հովեյանը:
Գեղարքունյաց թեմի երիտասարդական կազմակերպության անդամ Ա. Վարդանյանը փոքրիկ շնորհանդես ներկայացրեց եկեղեցական տոների վերաբերյալ՝ կարևորելով դրանք մարդու էկոդաստիարակության տեսանկյունից:
Գեղարքունիքի մարզպետարանի Բնապահպանության բաժնի վարիչ Հ. Համբարձումյանը ներկայացրեց բաժնի գործառույթները, Գավառ քաղաքի հակահամաճարակային տեսչության տնօրեն Ժ. Մակարյանը քաղաքի սանիտարական ու հիգիենիկ վիճակի մասին տեղեկություններ հաղորդեց, որոնց համաձայն վիճակը նախորդ տարիների համեմատ ավելի բարվոք է: Գավառի քաղաքապետարանի մամլո քարտուղար Ն. Խաչիկյանն էլ հավաստիացրեց, որ աղբահանությունը պատշաճ կատարվում է, Գավառագետը պարբերաբար մաքրվում է, իրականացվում են կանաչապատման ու բարեկարգման աշխատանքներ:

26 փետրվարի: «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում բաց դռների օր կազմակերպվեց նաև Հրազդանում: Միջոցառման հիմնական նպատակն էր ներկայացնել Կոտայքի մարզում և Հրազդան քաղաքում շրջակա միջավայրի պահպանությամբ զբաղվող առկա պետական, մասնավոր, հասարակական կառույցների գործունեությունը, քննարկել դրանց արդյունավետության բարձրացման հնարավորությունները, վերծանել առկա հիմնախնդիրներն ու գտնել լուծման հնարավոր տարբերակներ, ինչպես նաև համատեղ աշխատելու նոր ռազմավարություն մշակել և ընդլայնել համագործակցության շրջանակը:
Փոխմարզպետ Ա. Ղազարյանը կարևորություն տվեց փոխըմբռնմանը, համագործակցության բոլոր առաջարկներին, հավելեց, որ կարևորը համայնքային անվտանգության ռազմավարության մշակումն է՝ հաշվի առնելով բնապահպանական վտանգները: Այս առումով նա մեծ հույս է կապում Օրհուս կենտրոնի ու հասարակական սեկտորի հետ: Քաղաքապետարանի բնապահպանության վարչության ներկայացուցիչ Ս. Բաբուխանյանը կարևորեց Կանաչ կառավարում ծրագիրը՝ որպես բնապահպանական խնդիրները համայնքային մակարդակում լուծելու ևս մեկ քայլ: Նա քաղաքապետի անունից համագործակցության ու բաց աշխատելու պատրաստակամություն հայտնեց: ՀԿ- ների ներկայացուցիչները գոհունակություն հայտնեցին կապված վերջին շրջանում գրանցված առաջընթացի հետ, քանի որ պետական կառույցների հետ աշխատելու հնարավորությունները նկատելի մեծացել են, փոխհարաբերություններն ավելի ազատ են դարձել, որին խթանել է նաև այս ծրագիրը: Բարձրացվեցին բազմաթիվ խնդիրներ, առաջարկություններ արվեցին դրանք համատեղ, միմյանց օգնելով լուծելու վերաբերյալ: Համար առաջին հարցը աղբահանության կարգավումն է: Աղբավայրերը աղետալի վիճակում են: Աղբի վերամշակման 2010թ.-ից շրջանառվող նախագիծը դեռևս թղթի վրա է: Որոշվեց ուշադրության կենտրոնում պահել հանքաարդյունաբերությունը, արագ արձագանքել հանքաարդյունաբերական ցանկացած նոր նախաձեռնության:



Ծրագրի գործընկեր Դիլիջանի Օրհուս կենտրոնի հետ համատեղ Տավուշի մարզային փորձագետի նախաձեռնությամբ «Կանաչ կառավարում» ծրագրի շրջանակներում այս ժամանակահատվածում կազմակերպվել են Դիլիջան համայնքի քառամյա զարգացման պլանի հանրային քննարկումներ՝ ներգրավելով 115 ակտիվ քաղաքացիների, որոնց կողմից առաջ քաշված առաջարկությունների հիման վրա կազմվել ու համայնքի ղեկավարին է ներկայացվել առաջարկությունների

փաթեթ: Տարածաշրջանի բնապահպանական հիմ-նախնդիրների վերհանման և հասարակության իրա-զեկման նպատակով տեղեկատվության հարցումներ են ուղարկվել համապատասխան կառույցներին: Նույն նկատառումներից ելնելով քաղաքացիների էլեկտրոնային հասցեների ներգրավմամբ ստեղծվել է տեղեկատվական էլեկտրոնային ցանց, որով պարբերաբար տարածվել են ծրագրի շրջանակներում կազմվող էլեկտրոնային թերթի համարները, տեղեկություններ քաղաքացիների էկոլոգիական իրավունքների ու ՏԻՄ պարտավորությունների վերաբերյալ:

Այս ամենի մասին ծրագրի փորձագետ Ա. Հարոյանը տեղեկացրեց համայնքային թերթի ու երիտասարդական նախաձեռնությունների ակումբի ներկայացուցիչներին՝ փետրվարի 28-ին Դիլիջանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցած հանդիպման ժամանակ:

Էլեկտրոնային տեղեկագրի առաջին էջում օգտագործված նկարները վերցվում են հետևյալ էջից՝

http://www.google.ru/search?q=environment&hl=ru&newwindow=1&source=lnms&tbm=isch&sa=X&ei=BcE5UauJPIeitAaimIHoDA&ved=0CAcQ_AUoAQ&biw=1280&bih=709#imgrc=EO2F9aVbqlubGM%3A%3BiNz46K6oseJufM%3Bhttp%253A%252F%252Fwww.wallpapersgroup.com%252Fwp-content%252Fuploads%252F2012%252F12%252FGreen-environment-planet.jpg%3Bhttp%253A%252F%252Fwww.wallpapersgroup.com%252Fwallpaper%252Fgreen-environment-planet%252F%3B1920%3B1440

«Կանաչ կառավարում» ծրագրին հետևեք նաև www.aarhus.am կայքում գործող «Քաղաքացիական իրազեկություն» էջի միջոցով:

Այցելեք ու եղեք տեղեկացված:

http://www.aarhus.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=481&Itemid=590&lang=am

Սույն էլեկտրոնային տեղեկագիրը հնարավոր է դարձել իրականացնել Քաունթերփարթ ինտերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ՔՀՏԻԱ ծրագրի և ԱՄՆ բնակչության առատաձեռն աջակցության շնորհիվ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության գործընկերային պայմանագրի շրջանակներում՝ «Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ-ն միջոցով: Սույնի բովանդակությունը, արտահայտված տեսակետները և կարծիքները պատկանում են հեղինակին՝ «Բլեջան» ՀԿ-ին, և, հնարավոր է, չհամընկնեն Քաունթերփարթ ինտերնեշնլի հայաստանյան ներկայացուցչության , ԱՄՆ ՄԶԳ և ԱՄՆ կառավարության տեսակետների հետ:

Հարցերի կամ առաջարկությունների համար դիմել՝
հեռ: +374 264 6 15 11, բջջ: +374 77 76 46 41, +374 93 99 12 12
ֆաքս: +374 264 2 34 29
Email: blejanli@gmail.com